ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Պ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Նիկողայոս Ադոնցը (1871–1942) գիտական շրջանակներին հայտնի է հատկապես հայ-բյուզանդական հարաբերություններին նվիրված իր պատկառելի վաստակով[1], սակայն նրա բազմաթիվ աշխատություններ վերաբերում են նաև հայոց պատմության[2], կրոնի, եկեղեցու, մշակույթի, լեզվի, քերականության, բանասիրության հարցերին[3]:

Ցավոք, առ այսօր չունենք ականավոր գիտնականի կյանքի և գործունեության, գիտական ժառանգության ամբողջական ուսումնասիրությանը նվիրված մենագրական աշխատություն, ուստի շատ հարցեր տակավին կարոտ են բացահայտման կամ վերլուծության: Այսպես, օրինակ, շատ ուշ հայտնի դարձավ, որ Ադոնցը երկար ժամանակ և լրջորեն զբաղվել է նաև Հայկական հարցի տարբեր կողմերի ուսումնասիրությամբ: Դեռևս 1920 թ. Լոնդոնում նա անգլերեն հրատարակել էր Հայկական հարցին նվիրված արժեքավոր մի ժողովածու[4], որի ռուսերեն թարգմանությունը սահմանափակ տպաքանակով լույս տեսավ Երևանում 1984 թ., պրոֆ. Ջ. Կիրակոսյանի աշխատասիրությամբ[5]: Որոշ ժամանակ անց լույս տեսավ վերջինիցս պրոֆ. Վ. Ա. Դիլոյանի կատարած հայերեն թարգմանությունը[6]:

---

1 Ն. Ադոնցի բյուզանդագիտական վաստակի արժեքավորմանը նվիրված առավել ամբողջական գնահատականները տե՛ս Գ. Գյուզալյան. Նիկողայոս Ադոնցը որպես պատմաբան. Անթիլիաս, 1943: Ն. Ադոնցի՝ «Армения в эпоху Юстиниана» մենագրության անգլերեն թարգմանության Ն. Գ. Գարսոյանի առաջաբանը և ծանոթագրությունները (Lisbone. 1969): R. P. A d a l i a n. Nicholas Adontz: The quest for a rational history, Los Angeles, 1987.

2 Ուրարտագիտական ժառանգությունը մանրամասն վերլուծված է Ն. Վ. Հարությունյանի՝ «Նիկողայոս Ադոնցը և ուրարտագիտությունը» հոդվածում (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1997, N 2, էջ 215-224):

3 Ն. Ադոնցի գիտական ժառանգության ընդհանուր վերլուծությունը տե՛ս Կ. Ն. Ցուզբաշյան. Ն. Ադոնցի գիտական ժառանգությունը («Պատմա-բանասիրական հանդես», 1962, N 4, էջ 115–128): Պ. Հ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Նիկողայոս Ադոնց, տե՛ս Նիկողայոս Ադոնց. Երկեր չորս հատորով, հ. Ա, Հայկական հարց. Երևան, 1996, էջ 5-24 (այսուհետև՝ Ն. Ա դ ո ն ց. Հայկական հարց):

4 N. A d o n t z. Towards the Solution of the Armenian Question. London, 1920.

5 Н. А д о н ц. К разрешению Армянского вопроса. Ереван, 1984.

6 Ն. Ա դ ո ն ց. Հայկական հարցի լուծման շուրջ. Երևան, 1989:

Ն. Ադոնցի բեյրության արխիվի հայտնաբերումը[7] հնարավորություն տվեց ծանոթանալու նաև պատմաբանի՝ Հայկական հարցին նվիրված այլ ուսումնասիրությունների հետ: Բացի այդ, հանրապետության արխիվներից հայտնաբերվեցին և հրատարակվեցին այս խնդիրներին առնչվող Ն. Ադոնցի այլ աշխատություններ ևս[8]: Հայկական հարցին նվիրված հիշյալ աշխատությունները, ի մի բերելուց և դասակարգելուց հետո, լույս տեսան առանձին գրքով[9], ուր զետեղված է գիտնականի՝ տվյալ հարցին վերաբերող 16 հոդված, որոնք խնդրի ուսումնասիրության տեսանկյունից մեծ հետաքրքրություն են ներկայացնում[10]:

Պարզվում է, սակայն, որ ընթերցողին արդեն հայտնի այս նյութերով չեն սահմանափակվում ադոնցյան հետաքրքրությունները սույն հարցի նկատմամբ: Դրա ապացույց կարող է ծառայել ստորև ներկայացվող նյութը, որը վերջերս է հայտնաբերվել Հայաստանի Պատմության պետական կենտրոնական արխիվում: Այն Հայկական պատվիրակության կողմից Ազգերի լիգայի Գերագույն խորհրդին արվելիք հիշատակագրի նախագիծն է, որ կազմել է Ն. Ադոնցը: Նշելի է, որ դեռևս 1921 թ. դեկտեմբերի 3-ին Ազգային պատվիրակության նորընտիր նախագահ Գ. Նորատունկյանը Ն. Ադոնցին ուղղված հատուկ նամակով նրան տեղեկացնում էր, որ նա նշանակվել է պատվիրակության խորհրդական և որ «պատվիրակությունս մեծ հույս ունի, թե չեք զլանար Ձեր փորձված կարողության և արժանյաց նպաստը բերել այս առթիվ»[11]: Ադոնցը առանց տատանվելու տալիս է իր համաձայնությունը հատուկ նամակով.

«Ազնիվ տիար,

Ի պատասխան դեկտեմբերի 3-ի գրությանդ, սեպուհ պարտքս կը համարեմ վկայելու Ձերդ գերազանցության հարգանացս հետ իմ պատրաստակամությունս պիտանի լինել հիշածդ աշխատությանց՝ Ձերդ տնօրինությամբ և իմո կարողության չափով»[12]: Ն. Ադոնցը աշխատակցում է պատվիրակության իրավագիտական հանձնաժողովին, որի կազմում, բացի իրենից, ներգրավված էին նաև Միքայել Պապաջանյանը, Գրիգոր Անապյանը,

---

7 Պ. Հովհաննիսյան, Ե. Փամպուքյան. Ականավոր հայագետ Նիկողայոս Ադոնցի անձնական արխիվը, տե՛ս «Ազգակ» օրաթերթ, Բեյրութ, 9 մարտի 1993, էջ 4, 7:

8 Մ. Գ. Ներսիսյան. Հայկական հարցի արծարծումը 1912 թ. (Հրապարակում, տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1992, N 1, էջ 197-214: Նաև՝ Մ. Գ. Ներսիսյան. Պատմության կեղծարարները. Երևան, 1998, էջ 238-266): Պ. Մ. Մուրադյան. Հայաստանի սահմանների խնդիրը (հրապարակում).– «Ազատամարտ», 22–29 ապրիլի 1994, N 18, էջ 6-7:

9 Ն. Ադոնց. Հայկական հարց. Երևան, 1996:

10 Մասնավորապես տե՛ս Ա. Անճյանի դրախոսականը՝ «Հայկազյան հայագիտական հանդես», հ. ԺԸ., Բեյրութ, 1998, էջ 402-407:

11 Տե՛ս Համազգայինի Բեյրութի գրական պահոց, Նիկողայոս Ադոնցի ֆոնդ, պահարան 1, դզրոց Ե, Ա-8, թ. 22:

12 Տե՛ս ՀՀ Պատմության պետական կենտրոնական արխիվ, ֆ. 430, ց. 1, գ. 139, թ. 6:

Մ. Ս. Դավիթ-Բեկը և ուրիշներ[13]: Սույն հանձնաժողովի կազմում Ն. Ադոնցը կազմել է տեղեկագրեր, պատմական ակնարկներ, հուշագրեր՝ Հայաստանի սահմանների, ընակչության կազմի ու թվաքանակի վերաբերյալ: Ն. Ադոնցի աշխատանքները հիմք են ծառայել Հայկական պատվիրակության կողմից Գերագույն խորհրդին ներկայացված բազմաթիվ փաստաթղթերի, որոնցից է նաև ստորև ներկայացվող «Հիշատակագրի նախագիծը»: Այն կազմվել է Լոզանի կոնֆերանսի նախօրյակին և արտահայտում է հետևբրյան շրջանի հայ քաղաքական շրջանակների տագնապն ու մտահոգությունները հարազատ ժողովրդի ճակատագրի նկատմամբ:

Աշխատանքը մեքենագիր է: Տպագրվում է անհրաժեշտ կետագրական և ուղղագրական միջամտություններով: < > մեջ առնված են մեր լրացումները:

Բնագիրը գտնվում է ՀՀ Պատմության պետական կենտրոնական արխիվում (ֆ.430, ց. 1, գ. 145, թ. 15-20):

Պրոֆ. Ն. ԱԴՈՆՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻՆ ՏՐՎԵԼԻՔ ՀԻՇԱՏԱԿԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾ

Սևրի դաշնագրով երկարամյա անորոշությունից հազիվ դուրս ելավ Հայ հարցը, երբ նոր հանգամանքներ եկան մթագնելու հորիզոնը[1]: Կես դար է Հայ դատը դիվանագիտության սեղանի վրա, կես դար է, որ հայ կյանքի ողբերգություն<ը> քաղաքակիրթ աշխարհի առջև <է> և ամեն անգամ, երբ հուսո թեթև նշույլ է փայլում, իսկույն մարում է քաղաքական մեծ հովերից: Լինելով մի փոքր ավելի մարդասիրական, քան քաղաքական հարց[2], Հայ դատը տարօրինակ բախտով և միանգամ<այն> անիրավացի տրորվել է մեծ պետությունների Արևելյան քաղաքականության ընդհարումների մեջ և զոհ եղել նրանց հակամարտին: Մեծ պատերազմի ավանդներից մին այն պիտի լիներ, որ տերությանց հինավուրց մրցությունը Արևելքում պիտի խնայեր ճնշված ազգությունների շահերը և ի թիվս այլոց վերջ պիտի դներ հայ ազգության դարավոր հարցին: Եվ իրոք, Սիրիայի, Միջագետքի ժողովուրդները, որոնց համար Թուրքիայի լուծը գուցե և այնքան ծանր չէր, այսօր աղատված են, իսկ Հայաստանը, որի տանջանքի աղաղակները աշխարհը խլացրել են, դեռևս հեծում է բռնակալության շղթաներում:

Հայ ժողովուրդը իրավունք ուներ հուսալու, որ խառնելով իր արյունը դաշնակիցների զոհերի հեղեղին, պիտի բաժին ունենար հաղթական կողմին առավելություններից: Այնինչ, հայ հայրենիքը տակավին ասպարեզ է թուրքերի զինական արկածների, և փոխանակ պարպելու հայ վիլա-

13 Նույն տեղում, թ. 2:

յեթները[3], նրանք դեռ խիզախում են ասպատակել և գրավել իրենց սահմաններից դուրս հայկական այլ վայրեր[4], հաղթողի գիրք բռնելով արյունաքամ եղած հայ հակառակորդի հանգեպ: Դժվար է համոզել հայ ժողովրդին, որ գերմանական ահեղ բանակը փչրողները ուժ չունին թուրք բախտախնդիր հրոսակներին խելքի բերելու: Եթե պետությանց մի ազգու խոսքը բավական էր, որ ռուսական հաղթական բանակը 1878 թվականին քաշվի Էրզրումից[5], ապա ոչինչ աբժե արգեն պարտված և ջախջախված թուրքերին[6] հեռացնել որտեղ ե կը կամենան պետությունները:

Փոխանակ ազգու խոսքի, թուրքերն ավելի ևս խրախուսվում են կնքյալ դաշնագրի[7] վերաքննության կարելիությամբ: Ինչ և լինեն այն շարժառիթները, որ ստիպում են դաշնակիցներին դիվանագիտության մեջ չտեսնված շնորհն առնել թուրքերին՝ վերստին քննելով կնքյալ դաշնագիրն, և որպիսի զիջումներ և անելու լինեն նրանց[8], համենայն դեպս այդ ներողամտությունը պիտի չտարածվի, պիտի չչոշափի Հայ հարցը:

1. Այս ծանր պահուն Հայ պատվիրակությունը[9] պարտք ունի հայտնելու Գերագույն խորհրդիդ՝ խռովված և հուսահատ հայության խնդիրն ու բաղձանքը, որ դաշնադրի վերաքննվելու դեպքում Հայաստանին վերաբերյալ հոդվածները պահվին և կամ վերախմբագրվեին այն տրամադրությամբ, որով կազմվել են սկզբում նույն հոդվածները: Վերախմբագրել սահմանների խնդիրը, որ լուծված է միջնորդ դատավորի վճռով[10] և որը մտնելու է Դաշնագրի մեջ որոշակի: Նորա մասին կան հոռետես հայացքներ, որոնք պղտորել կուզեն եվրոպական հասարակաց մտքերը՝ թե դատավորի գծած սահմանները խիստ ընդարձակ են և կամ պետություն կազմելու ուժերը պակասում են մեզ: Այս տեսակ կարծիքների անհիմն լինելը բացատրված է առանձին հիշատակարանով[11], որ կառաջարկենք Խորհրդիդ բարձր ուշադրության: Սահմանները որևէ փոփոխության ենթարկելու ո՛չ իրական և ո՛չ էլ իրավական հիմք չկա: Ամեն մի ձգտում որևէ կերպ հեղհեղել սահմանները, պիտի արժե նոր ձգտումներ և նոր դառնություններ հայ ժողովրդյան: Հայաստանի արևմտյան սահմանը, ուրեմն, լինելու և ընդունելու է Վիլսոնյան գիծը: Ինչ կը վերաբերի արևելյան սահմանին, Պատվիրակությունս կը խնդրե, որ Սևրի 92 հոդվածը[12] վերախմբագրվի միայն այն թեթև ուղղումով, որ փոխանակ Ադրբեյջան և Վրաստան կողմերի, դրվի Ռուսիա և Հայաստանին թողնվի սահմանների ճշտումը՝ անմիջապես բանակցելով Ռուսիո հետ: Ինչ կը վերաբերի Դաշնակիցների աջակցության, որ նախատեսնված է նույն 92 հոդվածում, փափագելի է թողնել, եթե Դաշնակիցները իրենք ընդդեմ չեն: Մենք ամեն հույս և իրավունք ունինք սպասելու, որ Նոր Ռուսիա[13] պիտի ողջունե Թուրքիայից ազատագրված Հայաստանի անկախությունը, և իր կողմից արգելք չպիտի լինի ամբողջական հայ հայրենիքի գործին:

2. Հայ ժողովրդի ողբերգական կացությունը պարտավորեցնում է հայ <կական> պատվիրակության խնդրել, որ այժմեն իսկ առանց հապա-

ղելու հնարավորություն տրվեր տարագիր ամբոխին դառնալ իրենց տեղերը: Նրանցից մի խոշոր բազմություն, մոտ 300.000 ահա քանի տարի է ծանրացած արևելահայ գյուղացիության վերա, որն ինքն ներկայումս տնտեսական ճգնաժամի մեջ է, և փախստականների դարձով նրանց վիճակը ևս կբարվոքի որոշ չափով: Այս և մյուս երկիրներ ապաստանած փախստականների դարձը հնարավոր է միմիայն ապահովության հուսալի երաշխիքով: Այդպիսի մի երաշխիք կը նկատենք Գերագույն խորհրդի կողմից նշանակված մի բարձր կառավարչի կամ կոմիսարի ներկայությունը Հայաստանում: Նրան առընթեր և օգնական կազմվելու է քանի մը մասնագետ խորհուրդներ, որոնց վերա հենվելով բարձր կոմիսարը պիտի սկիզբը դնե երկրի վերաշինության, ժողովրդի վերաբնակության գործին և պիտի անե փոխանցման շրջանի այն բոլոր աշխատանքները և նախապատրաստությունները, որոնք տանում են դեպի ինքնուրույն տնտեսական կյանքի:

Բարձր կոմիսարին տրամադրելի անհրաժեշտ ֆինանսական միջոցները կարելի <է> ապահովել միայն փոխառությամբ, որն հայ ժողովուրդը պիտի դարձնի ամենայն փութով և շնորհակալությամբ:

Հայ ժողովրդյան աշխատասիրությունը և՛ բարոյական, և՛ ֆիզիկական տոկունությունը, ինչպես և՛ նրա աշխարհահռչակ ձեռներեցությունը արդյունաբերական և առևտրական գործերում՝ ընդունակություններ, որոնք հնարավորություն են տվել նրան հիմնել օտար վայրերում շեն և ծաղկյալ գաղութներ, անվիճելի գրավականներ են, որ նա պիտի կարենա կրկնապատկել և եռապատկելով իր ջանքերն ու բնատուր կարողություններն, իր հայրենի երկիրն ավերակներից կանգնել և դնել նորան պետական կյանքով ապրելու շավղի վրա: Թուրքիա<յից> ազատված բոլոր փոքր ազգությունների հանդեպ հայերն այն առավելությունն ունին, որ ծաղկուն և բազմաթիվ գաղութների տեր են, գաղութներ, որոնք մտավոր և նյութական ուժերի կատարյալ շտեմարաններ են, և նրանց աջակցությամբ է, որ պիտի վերածնվի Հայրենիքը: Բուլղարիան 1897 թ. նույն պայմանների մեջ էր, ինչև Հայաստանն այժմ թե մեծությամբ և <թե > ընակչությամբ: Նա ևս ուներ 99000 քառ. կմ 1.130.000 բնակչով[14]: Ներկայումս այն 4 միլիոն ժողովրդյան ակնածելի հայրենիքն է քաղաքականապես և կարող պետություն*:

Վիճակագրական տեղեկությունները վերցրած ենք Քուինեի հայտնի գրքից («Լա Թյուրքի տ՝Ազի», 4 հատոր)[15]: Հեղինակը աշխատել է իր գրքի վերա 12 տարի և օգտվել է և թուրք աղբյուրներից, նրանց սալնամեներից և տեղն տեղն ևս հավաքել է տեղեկություններ: Նրա աշխատության մասերը համահավասար արժեք չունին, կան թույլ և անճիշտ մասեր և ավելի ստույգ էջեր[16]: Հայկական վիլայեթների տվյալները հիմնված են մեծ մա-

* Այստեղ պետք է տրվեին վիճակագրական տվյալներ Արևմտյան Հայաստանի վերաբերյալ, որոնք, սակայն, բնագրում բացակայում են (Պ. Հ.):

սամբ սալնամենների վերա: Բոլոր մասնագետների, ինչպես ուղևորների կարծիքով, Քուինեի աշխատությունը շատ կողմերով ավելի ընդունելի է, քան մյուս, և մանավանդ թուրք վիճակագրությունները, որոնք լույս տեսած են քաղաքական դիտումներով[17]:

Թուրք կառավարությունը սովորություն է արել Հայկական հարցի սուր րոպեներին վիճակագրական տախտակներ կազմել և հրատարակել ի ցույց եվրոպական պետությանց, որ հայերը ոչինչ տոկոս են կազմում Հայաստանում: Հարկավոր է միայն կողք կողքի դնել այդ տախտակները, որպեսզի ակներև լինի, որ նրանք գիվանադիտական շարադրություններ են և ոչ թե իսկ թվահամար: Դեռ 1879 թ. հրատարակված պաշտոնական մարդահամարով իբրև թե հինգ հայ<կական> վիլայեթ<ներում> կար 1.030.000 հոգի:

Հետևյալ՝ 1880 թ., դարձյալ պաշտոնական թվահամարով՝ 2.054.200

1890 թ.	„	„	„	1.934.447.
1895 թ.	„	„	„	2.505.904

և վերջապես պատերազմի նախօրեին՝ 1914 թ. մայիսին, հրատարակվեց նոր տախտակ, որով նույն 5 վիլայեթներում հաշվում է 2.670.104[18]:

Այսպիսի թվական թռիչքներ ոչ մի վիճակագրական գիտության հայտնի չեն: Շատ տարօրինակ կերտված ունի վերջին՝ 1914 թ. տախտակը, բավական է համեմատել Քուինեի հետ, որպեսզի կասկած չմնա, որ հայոց թվերը գրեթե թողված են անփոփոխ, իսկ մուսուլմանների թիվը ավելացած է ըստ տեղին և ըստ քմահաճության մի քանի հարյուր հազարներ...

Վիճակագրությունը Թուրքիայի մոլորեցուցիչ ախտերից մինն է: Եվ նորա ստուգման միակ ուղեցուցիչ սկզբունքը համարվելու <է> հողի և մարդու հարաբերության աստիճանը: Մի նահանգների համար 20–25, առավելն 30 մարդ է հաշվելու քառակուսի կիլոմետրին, մյուս նահանգներին 9–12, առավելն 15 <մարդ>: Միայն այս կերպ <է> կարելի գաղափար կազմել Թուրքիո մարդաբնակության վերա:

Հայ<կական> վիլայեթների մի քառակուսի կիլոմետրի վրա 8–10 մարդ հաշվելը հիմն և արդարացումն ունի ոչ թե միայն քաղաքական և տնտեսական պայմանների մեջ, այլև նրանով, որ 1844 թ. վիճակագրությամբ հայ<կական> վիլայեթներում քառակուսի կիլոմետր<ին> դալիս էր 4-5 մարդ[19], ժամանակակից ճանապարհորդներից մեկ<ի> ասելով՝ 5,4 մարդ: 50-60 տարվա մեջ մարդաբնակությանց կրկնապատկվելը ընդունված է քաղաքակիրթ պետությանց համար, և Թուրքիայի (Հայ<կական>) վիլայեթների նկատմամբ այդ գերագույն չափն է:

Վիճակագրական 1890 – 1895 թվերի տախտակները

Վիլայեթներ	1890	1895	Աճում
1. Էրզրում	431.671 իսլամ 113.488 քրիստ.	545.782 իսլամ 123.935 քրիստ.	
գումար	545.159	669.717	124.588
2. Վան	207.028 իսլամ 101.264 քրիստ.	282.582 իսլամ 135.912 քրիստ.	
գումար	308.292	418.494	110.202
3. Բիթլիս	167.054 իսլամ 109.944 քրիստ.	352.713 իսլամ 126.874 քրիստ.	
գումար	276.998	479.587	202.539
4. Մամուրեթ ուլ Ազիզ	300.194 իսլամ 81. 158 քրիստ.	494.881 իսլամ 91.422 քրիստ.	
գումար	381.352	586. 303	204.951
5. Դիարբեքիր	240.574 իսլամ 71.870 քրիստ.	378.253 իսլամ 83.752 քրիստ.	
գումար	312.444	462005	149.561
Հինգ վիլայեթների ընդհանուր գումարը	1.934.447	2.505.904	571.457

Այսպես ահա, 5 տարվա մեջ չտեսնված բան է վիճակագրական գիտության մեջ:

1879 թ. հայ<կական> վիլայեթների վիճակագրական տախտակը տպված է Պոլսի թրքական «Վակտ» թերթում՝ նույն տարվա նոյեմբեր և դեկտեմբեր <ամիսների> համարներում: Արտատպված է այնտեղ<ից> գերմանական գիտական հանդեսում՝ «Zeitschrift der geselschäft für Erdmund» 1880 թ.: Այս տախտակով գումարն է 1.030.028 հոգի:

Հետևյալ՝ 1880 թ. թուրք<ական > կառավարության դեսպաններին տրված պաշտոնական տախտակը տպված է ռուսերեն «Հայկական հարցը Թուրքիայում» գրքում[20] (հավանորեն ևս «Կապույտ գրքից»), որտեղ գումարն է 2.054.200[21]:

1890 թվահամարը տպված է «Կապույտ գրքում», ինչպես և 1895 թ. թվահամարը, որը հանձնված է եվրոպական պետությանց կողմից Հայաստան ղրկված հանձնաժողովին (Իզմիրլյան պատրիարքի ժամանակ)[22] նույնպես տպված է «Կապույտ գրքում» (կարծյոք սորա 1896 կամ 1898 հատորում):

Ծանոթագրություններ

1. *Ակնարկում է 1920 թ. սեպտեմբերին սկսված թուրք-հայկական պատերազմը և Հայաստանի Հանրապետության տարածքների զավթումը քեմալականների կողմից:*
2. *Այլ կապակցությամբ ևս Ն. Ադոնցը չեշտում է, թե «Հայկական արյունոտ դատը միայն քաղաքական հարց չէ, նա ժամանակակից մարդկության խղճի հարցն է» (տե՛ս Ն. Ադոնց. Հայկական հարց, էջ 143):*
3. *Խոսքը Սևրի պայմանագրով Հայաստանին անցնելիք Տրապիզոնի, Էրզրումի, Վանի և Բիթլիսի վիլայեթների մասին է:*

4. Մինչև 1920 թ. նոյեմբերի 15-ը թուրքական զորքերը ռազմակալել էին Կարսը, Ալեքսանդրապոլը, Սուրմալուն և այլ տարածքներ:
5. Ակնարկում է 1878 թ. Բեռլինի կոնգրեսի կարծր գիրքորոշումը Ռուսաստանի նկատմամբ, որի արտահայտություններից մեկն եղավ ռուսական բանակների անհապաղ հեռացումը Արևմտյան Հայաստանի գրավյալ տարածքներից:
6. Խոսքը Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի կրած պարտության և Մուդրոսում կնքված զինադադարի (1918 թ. հոկտեմբեր) մասին է:
7. Այսինքն՝ Սևրի պայմանագրի:
8. Ակնարկում է Լոնդոնի կոնֆերանսը (1921 թ. փետրվար–մարտ), որտեղ վերանայվեց նաև Սևրի պայմանագիրը:
9. Նկատի ունի Գ. Նորատունկյանի գլխավորած Ազգային պատվիրակությունը:
10. Այսինքն՝ ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի:
11. Տե՛ս Ն. Ադոնց. Հայաստանի սահմանների խնդիրը (Նշվ. աշխ., էջ 137-143): Հմմտ. նաև Ն. Ադոնց. Հողային զիջումներ Թուրքիային (Նույն տեղում, էջ 144-145):
12. Սևրի պայմանագրի 92-րդ հոդվածում նշված է. «Ադրբեջանի և Վրաստանի հետ Հայաստանի սահմաններն ըստ պատկանելույն կորոշվեն շահագրգռված պետությունների ընդհանուր համաձայնությամբ...», տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում» (1828-1923), Ջ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ (Երևան, 1972, էջ 677):
13. Այսինքն՝ Սովետական Ռուսաստանը:
14. Նկատի ունի Հյուսիսային Բուլղարիայի և Արևելյան Ռումելիայի միավորման հետևանքով (1885 թ. սեպտեմբերի 6) մեկ միասնական Բուլղարական պետության ստեղծումը:
15. Տե՛ս V i t a l C u i n e t. La Turquie d'Asie. Ge'ographie, administrative, statistique descriptive et raisonne'e de l'Asie Mineure. Vol. I–IV, Paris, 1892–1895.
16. Այլ կապակցությամբ Ն. Ադոնցը Վիտալ Քինեի սույն գիրքը համարում է «ծավալուն, բայց, ցավոք սրտի, շատ պակասավոր» (տե՛ս Ն. Ադոնց. Հայկական հարց, էջ 81): Վ. Քինեի աշխատությունը, որն, անշուշտ, պարունակում է հարուստ վիճակագրական և տեղեկատվական տվյալներ, պետք է օգտագործել զգուշությամբ: Նա Թուրքիա էր հրավիրվել կառավարության կողմից և հանձնարարություն ուներ գրելու Թուրքիայի աշխարհագրությունը: Ինչպես ճիշտ է նկատվել, Քինեի գիրքը գրված է սուլթանի հրահանգների, նրա քաղաքական ձգտումների համաձայն. «Լավապես գոհացում տալու համար սուլթանի բաղձանքին, Քինեն մասնավորապես ջանք է թափած՝ թե՛ թուրքերի թիվը ավելի ցույց տալու և թե՛ հայերինը նվազեցնելու: Նա նենգափոխել է իրականությունը, ուստի կարելի չէ հավատ ընծայել իր թիվերին» (տե՛ս Ե. Խաթանասյան. Հայոց թիվը. Բոստոն, 1965, էջ 13): Հմմտ. Հ. Առաքելյան. Թուրքահայ ժողովրդի վիճակագրությունը.–«Արոր», 1913, դեկտեմբեր, էջ 53: Նաև Պարույր Աթանասյան, Հայկական վիլայեթների ներկա տնտեսական վիճակը.–«Ջիթենի», Թիֆլիս, 1915, էջ 294-331:
17. Անդամ ինքը՝ Վ. Քինեն, ստիպված է խոստովանել, որ «Մարդահամարի այնքան օգտակար և հետաքրքրական գիտությունը, ոչ միայն մուտք չի գործել Թուրքիայի սովորությունների ու բարքերի մեջ, այլև իշխանությունները գիտակցաբար մերժում են այն: Բուն պաշտոնական մարդահամարը բացարձակապես թերի է Թուրքիայում» (տե՛ս V. C u i n e t. La Turquie d'Asie. V. I, Paris, 1892, p. 5): Այսպես, եթե Քինեի անդամ նվազեցված տվյալներով 1882 թ. Ասիական Թուրքիայում բնակվում էր 1.181.066 հայ, ապա թուրքական պաշտոնական վիճակագրության համաձայն՝ 726.750 հայ (տե՛ս «Ավետիք», ամսագիր, Բեյրութ, 1940, N 3-4, էջ 27): Հետաքրքիր է, որ Լոզանի կոնֆերանսի ռազմատարածքային հանձնաժողովի 15-րդ նիստի ժամանակ (1922 թ. դեկտեմբերի 14), Թուրք պատվիրակ Իսմեթ փաշան Քինեի արդեն նվազեցրած տվյալը էլ ավելի է նվազեցնում և խոսում «մոտավորապես մեկ միլիոն հայերի մասին» (տե՛ս «Армянский вопрос на Лозаннской конференции». Извлечения из протоколов, Тифлис, 1926, с. 21).

18. *Մեծ Եղեռնի նախօրյակին Թուրքիայում հայերի թվաքանակի վերաբերյալ գոյություն ունեցող գրականությունից կառանձնացնելինք Ե. Խաչանասյանի արգեն նշված գիրքը և Ե. Սարգսյանի՝* «Административная и демографическая политика османского правительства в Западной Армении» *ուսումնասիրությունը (տե՛ս «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», գիրք 5, Թուրքիա. Երևան, 1970, էջ 357-397):*

19. *«Հայկական հարցը Սևրում» և «Հայաստանի սահմանների խնդիրը» հոդվածներում Ն. Ադոնցը դարձյալ շոշափում է հայկական վիլայեթների բնակչության խտության խնդիրը (տե՛ս Ն. Ադոնց. Հայկական հարց, էջ 128-130, 137-141):*

20. *Ենթադրում ենք, թե խոսքը* «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году» *(Մ., 1896) գրքի մասին է:*

21. *Խոսքը 1895 թ. անգլիական կառավարության կողմից հրատարակվող* «Blue Book» *փաստաթղթերի ժողովածուի մասին է: Այստեղ զետեղված են Հայոց հարցի վերաբերյալ Մեծ Բրիտանիայի արտաքին գործոց նախարարի գրագրությունները Թուրքիայում գործող անգլիական դիվանագետների հետ (տե՛ս «Turkey» N 1–8, 1895–1896):*

22. *Խոսքը Կ. Պոլսի Հայոց պատրիարք (1894–1896) Մատթեոս արքեպիսկոպոս Իզմիրլյանի (1845–1910) մասին է, հետագայում Հայոց կաթողիկոս՝ Մատթեոս Բ (1908–1910): Գործուն մասնակցություն է ունեցել Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու պայքարին:*

НИКОЛАЙ АДОНЦ И АРМЯНСКИЙ ВОПРОС

П. О. ОГАНИСЯН

Резюме

Н. Адонц–видный представитель арменоведения XX в., а также имеющий мировую известность византинист. Н. Адонц был профессором Санкт-Петербургского (1908–1920) и Брюссельского университетов (1931–1942) и сыграл важную роль в подготовке научных кадров, в частности, арменоведов. Особое место в научном наследии Н. Адонца имеют его исследования, посвященные Армянскому вопросу. Они не столь известны в научных кругах, так как часть этих исследований разбросана в современной Н. Адонцу российской прессе, другая же часть в рукописном состоянии находится в его бейрутском архиве, который был обнаружен лишь недавно. Поныне известны 18 статей Н. Адонца, посвященных Армянскому вопросу, которые были написаны в 1912–1930 гг. и представляют большой интерес с точки зрения исследования данной проблемы. Необходимо отметить, в частности, следующие его исследования: "К Армянскому вопросу в Турции" (1913), "Исторические основы Армянского вопроса и падение Турции", "Раздел Турции", "Армянский вопрос и германские планы", "Турецкая нота и турецкая Армения" (все–1918 г.), "Армянский вопрос в Севре" (1920), "О границах Армении", "Курдское проникновение в Армению" (оба–1922 г.), "Армянский вопрос в Американском сенате" (1928). Конечно, работы Н. Адонца, посвященные Армянскому вопросу, не ограничиваются перечисленным. В ходе дальнейших поисков могут быть обнаружены и другие его работы. Об этом может свидетельствовать, в частности, публикуемая выше статья "Проект Памятной записи, предоставленной Верховному совету Лиги Наций", обнаруженная недавно в Центральном государственном историческом архиве РА. Эта статья была написана накануне Лозаннской конференции (1922) и отражает тревогу и озабоченность армянских политических кругов судьбой родного народа в период после заключения Севрского договора.